10–15 օր ևս հազիւ կարողանանք պահպանել ներկայ դրութիւնը։ Սարսափելի չէ մահը... երկրորդ տարին է, որ մենք արդէն հաշտուել են այդ մտքի հետ։ Գողթնը կը մեռնի հերոսի մահով, սակայն, թո՛ղ ամբողջ աշխարհը իմանայ, որ այս անգամ մեզ մահուան դուռ հասցնողը Երևանի մեր կառավարութիւնն է։ Փրկուած է Գողթնը, եթէ մօտ օրերում գոնէ 400 սրտցաւ զինուոր մեզ օգնութեան հասնի»։

Ցուսահատի ճիչ էր այս։ Գողթնում չգիտէին, որ Երևանը ինքն էլ օրհասական ժամեր էր ապրում և նոյնպէս ճչալով՝ օգնութիւն սպասում արտաքին աշխարհից։

Բայց և այնպէս, կառավարութիւնը չտապեց կազմակերպել Գողթնի օգնութեան գործը. մի կողմից նիւթական միջոց ու պարէն փութացրեց, միւս կողմից՝ յանձնարարեց Գ. Նժդեհին ու բաշգառնեցի յայտնի խմբապետ Ղազար Քոչարեանին կազմել մի զօրամաս՝ Գողթն ուղարկելու համար։ Մի քանի շաբաթից զօրամասը արդէն պատրաստ էր, և սեպտ. 4–ին, Ղազարի հրամանատարութեան տակ, դուրս եկաւ Երևանից ու հոկտ. 2–ին, Դարալագեազի ու Զանգեզուրի վրայով, հասաւ Գողթն։

Տխուր էր այնտեղի կացութիւնը։ 6 լեռնային գիւղերը միայն մնացել էին ազատ, միւսները կամ տեղահանուել ու կոտորուել էին, կամ ապրում էին ջարդի մղձաւանջի տակ։ Ազատ մնացած գիւղերն էին Բիստ, Ալահի, Նաստրազ (Մեսրոպաւան), Փառակա, Ցղնա և Ռամիս, որոնք գտնւում էին պաշարուած վիճակում։ Ազուլիսները համակերպուել էին թրքական իշխանութեան, հեռացրել էին իրենց միջից կռուող ուժերը և դրանով էին ուզում պահել իրենց գոյութիւնը։ Տիրում էր պարէնի անասելի սաստիկ յարաբերութեան և մթերք ստանալու միակ ճանապարհը Ղափուչուխի լեռնանցքն էր՝ 12,853 ոտք բարձրութեամբ, այն էլ վտանգուած էր Օխչի ձորի ապստամբ թուրքերի կողմից։

Հայկական զօրքերի ժամանումը բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը։ Ղազարը Մովսէս Գիւլնազարեանի և տեղական ուժերի գործակցութեամբ կազմակերպեց շրջանի ինքնապաշտպանութիւնը — 7–800 կռուողներ, 2 թնդանօթ, 6 գնդացիր, — և այնուհետև Գողթնը ո՛չ միայն դիմացաւ թրքական յարձակումներին, այլ և ինքն էլ դարձաւ նախաձեռնարկ։ Նոյեմբերի կէսերից սկսեցին անվերջ կռիւներ գողթնեցիների և թուրքերի միջև. նոյեմբ. 12–ին թշնամին առաջ խաղաց Բիստի վրա ու յետ շպրտուեց։ Նոյ. 25–ին թուրքերն աւելի մեծ ուժերով, երկու զօրասիւնով, յարձակուեցին Բիստի, Ալահիի ու Մեսրոպաւանի և Ռամիսի վրա։ Տեղի ունեցան տաք կռիւներ. թշնամին պարտուած՝ դիմեց խուճապային փախուստի՝ հայերի ձեռքը թողնելով առատ աւար, զերիներ ու մի դրօշակ։

Իր վրէժը, սակայն, մի ամիս յետոյ լուծեց Վերին Ազուլիսից։ Օխչի ձորի ու Գեղեայ ձորի աւերից յետոյ, Օրդուբաթի ու Նախիջևանի թրքութիւնը, կազմակերպեց Ազուլիսների թալանն ու կոտորածը։ Դէպքի մանրամասնութիւնները Երևան հասցրեց Գողթնի հաշտարար դատաւոր Ց.